

# Ա Շ Ս Դ Ո Ւ Բ Ե Լ Ի Կ Ա Յ Ի Յ Ա Բ Ի Կ Ա Մ Մ Ե Ր Ո Ւ Ի Մ, Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ե Ր Ո Ւ Ի Մ և Կ Ա Ռ Ո Ւ Թ Յ Ց Յ Ն Ե Ր Ո Ւ Ի Մ

Ա.Թ.Ա.Ր.Բ.Ե.Կ.Յ.Ա.Ն.Ի  
Հ Ի Դ Ր Ո Ւ Ե Լ Ե Կ Տ Ր Ա Կ Ա Յ Ա Ն Ի Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ը

Գ. Զ Ա Ն Փ Ո Լ Ա Դ Յ Ա Ն  
Ի ն ժ ե ն ե ր

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը, Սևան-  
Հրազդանի հիդրոէլեկտրակայանների կասկադի  
հրկրորդ աստիճանը, տեղավորված է Ախտայից  
հյուսիս:

յանի հեռացող շրանցքից: Կողային ներհոսման  
և կարգավորվող ավազանից զուրկ լինելով, հիդ-  
րոէլեկտրակայանը օգտագործում է միայն լճի  
ջուրը և դրանով իսկ լիովին կրկնում է Սևանի  
հիդրոէլեկտրակայանի աշ-  
խատանգի ուժիմը:

Աթարբեկյանի հիդրո-  
էլեկտրակայանը օգտագոր-  
ծում է Հրազդան գետի օգ-  
տակար անկման 16%-ը:  
Կայանի բոլոր կառուց-  
վածքները տեղավորված են  
Հրազդան գետի ձախ ափին:

Աթարբեկյանի հիդրո-  
էլեկտրակայանում արտա-  
դրված մեկ կվտժ էլեկ-  
տրաէներգիայի ինքնարժե-  
քը կազմի 2,3 կու.։ Կա-  
յանի կարողությունը փոքր-  
ինչ պակաս է Սևան-Հրազ-  
դանի հիդրոկայանների  
կասկադի առաջնեկ Քանա-  
քեռքէսից:

Նկ. 1. Կայանի հանգուցի շինարարության ընդհանուր տեսքը:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը դերի-  
վացիոն տիպի է: Նրա գերիվացիան իր սկիզբն  
է առնում անմիջապես Սևանի հիդրոէլեկտրակա-

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը կազմ-  
վածիոն տիպի է: Նրա գերիվացիան հիմնական հանգուցներից:  
Գլխային հանգուցը բաղկացած է մոտեցնող

ջրանցքից, ջրընդունիչից և ջրանետ կառուցվածքից:


Մոտեցնող ջրանցքը, որն ունի 930 մ երկարություն, հարում է Սևանի հիդրոէլեկտրակայանի հեռացող թունելի ճակատամուտքի ծայրին: Թունելից ջրանցքով վերցվող ջուրը մտնում է Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի ջրընդունիչը: Ջրանցքի երկայնական կտրվածքի ձևը փոփոխական (տրապեցողդային և ուղղանկյուն) է: Ջրանցքի երեսապատումը կատարվելու է բետոնով և երկաթբետոնով:

Գլխային կառուցվածքների շրջանում, գետաշրջերի առկայության պատճառով, մոտեցող ջրանցքի տակ նախատեսված է երկայնական դրենաժ:

Է փականակ ունեցող ընդունման գլխամասից, մարիչ-ջրհորից և հեռացնող վաքից:

Ջրանետի անցքը միբրջանի է, ուղղանկյուն: Նա ծածկվում է  $8 \times 4,3$  մ շափի սեպմենտային փականակով:

Սեպմենտային փականակի ամբարձիչ մեխանիզմը նման է ջրընդունիչի ամբարձիչ մեխանիզմին: Փականակի վերևի կողմից նախատեսված է վերանորոգման փակոց: Կայանի աշխատելու ժամանակ ջրանետի փականակը գտնվում է նորմալ իշեցված դիրքում լիովին փակված անցքով: Ջրանետի փականակը բացվում է նորոգման աշխատանքների ժամանակ. ջուրը նետելով Հրազդան գետի մեջ, նա դրանով էլ դադարեցնում է նրա մուտքը դերիվացիայի մեջ:



նկ. 2. Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի կառուցվածքների պլանը:

Ջրենդունիչը միբրջանի է, բաց տիպի, տեղավորված է մոտեցնող ջրանցքի ծայրում: Ջրընդունիչի անցքի շափերը կանխորոշված են ջրանցքի շափերով և հավասար են  $8 \times 4,7$  մ: Անցքը ծածկվում է  $8 \times 3,8$  մ շափի սեպմենտային փականակով, որի կառավարումը կատարվում է 6 տ բեռնունակություն ունեցող ստացիոնար կարապիկներով: Փականակի վերևի կողմից նախատեսված են գերանափականային (շանդոր) փորատներ: Կայանի նորմալ աշխատանքի ջրընդունիչի փականակը լիովին բացված է և Սևանի հիդրոէլեկտրակայանում բանեցված ջուրը ուղղակի բաց է թողնվում Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի դերիվացիայն ջրանցքի մեջ: Կայանում տեղի ունեցող վերանորոգման աշխատանքների ժամանակ սեպմենտային փականակը փակվում է, լիովին ծածկում ջոի մուտքը դերիվացիայի մեջ:

Ջրանետ կառուցվածքները հարում են ջրընդունիչին  $43^{\circ}$  անկյան տակ: Ջրանետը բաղկացած

Զմեռը կայանի անխափան աշխատանքն ապահովելու համար նախատեսված է ջրանետի փականակի փորատային կոնստրուկցիաների պարերական տաքացումը:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի դերիվացիան սկիզբ է առնում ջրընդունիչից և անցնում Հրազդան գետի ձախ ափով: Դերիվացիան բաղկացած է երեք ջրանցքից՝ 7776 մ ընդհանուր երկարությամբ և երկու թունելից՝ 6369 մ երկարությամբ: Նկատի ունենալով ինժեներա-երկրաբանական և տեղագրական պայմանները, ընդունվել են ջրանցքների տրապեցողդալ և ուղղանկյուն կտրվածքները՝ յոթ զանազան շեպի թերվածքով:

Ջրանցքների տրապեցողդալ կտրվածքների համար թեքությունը հավասար է  $0,0004$  ուղղանկյուն կտրվածքների համար՝ խորդուրոդության գործակիցը՝  $0,015$  և  $0,014$ : Ջրանցքների լցման խորությունը հաշվարկային ծախսի դեպքում հավասար է  $4$  մ:

Թունելների երեսապատման համար նախատեսված են երեսարկման երկու տիպ: Այդ տիպերն ընդունվել են կոնստրուկտիվ կերպով և կիրառվում են ապառաժներում, առանց լինային ճնշումը հաշվի առնելու, կամ թույլ լեռնային ճնշումով:

Թունելների թեքությունը, որ ընդունվել է էներգո-տեսական հաշվարկների համաձայն, հավասար է 0,001, իսկ խորությունը՝ գործակիցը՝ 0,013: Հաշվարկային ծախսի դիպում լցման խորությունը հավասար է 4,49 մ:

Կայանային հանգույց. ճնշումնային ավազանը տեղափոխած է դերիվացիայի վերջում և նրա կառուցվածքների կազմի մեջ մտնում են: Ճնշումնային խողովակաշարի գլխամասը, սիֆոնային ջրանետը, մակերևնույթային ջրաթափի՝ լողացող մարմինների նետման համար և հատակային ջրթող-լվացիչը: Ճնշումնային խողովակաշարի գլխամասն ունի երկու անցք:

Յուրաքանչյուր անցք ունի  $4 \times 4$  մ չափի հիմնական հարթ փականակներ և մանր վանդակներ: Հիմնական փականակի և վանդակի վերանորոգման համար վերկի կողմից նախատեսված են գերանափականային փորատներ:

Զմուռաքանչյուր վանդակների աշխատանքը պահպանելու համար նախատեսված է նրանց էլեկտրական տաքացումը:

Հիմնական փականակները չեն կարգավորում ճնշումնային խողովակի մեջ մտնող ծախսերը և նախատեսված են միայն անցքերի լրիվ փակման կամ բացման համար: Նրանք բարձրացվում են ստացիոնար էլեկտրական կարապիկի միջոցով:


Եռախցիկ սիֆոնային ջրանետը նախատեսված է կայանի բեռնավորման իշեցնելու դեպում ջրի ավելցուկները թափելու և ճնշումնային խողովակաշարում ջրի հորիզոնը բարձրացնելու համար: Սիֆոնային ջրանետը կարող է օգտագործվել նաև ճնշումնային ավազանի մեջ մտնող սղինի (այս) նետման համար վանդակների փակվելուց խուսափելու համար:

Մակերևույթային ջրաթափի շեմքի լայնությունը 2 մ է, նրա կատարի թեքությունը նորմալ դիմացած հորիզոնից 1 մ-ով ավելի ցածր է:

Անցքը ծածկված է կափույրի (կլապան) փականակով, որն իջնում է ավազանից լողացող մարմինների նետման դեպում:

Տուբինային գլխամասի շեմքից 1,1 մ ավելի ցած տեղափորված է հատակային ջրթող-լվացիչի սրահը: Արահի կտրվածքի շափերը հավասար են  $1 \times 2$  մ: Անցքը փակվում է հարթ անիվավոր փականակով:

Սիֆոնային ջրաթափի, մակերևույթային և հատակային ջրանետների միջոցով նետվող ջուրը մտնում է արագահոսքի մեջ: Արագահոսքի



Նկ. 3. Արագահոսքի տեղամասը:

տրասսան, որը պլանում ուղղագիծ է, անցնում է կայանի հանգույցի հյուսիսային կողմից և ջուրը նետում է Գյումուշի հիդրոէլեկտրակայանի ջրամբարի մեջ: Արագահոսքի կտրվածքը եռանկյունաձև է, թեքությունները ընտրվել են տեղի ուղի համաձայն:


Արագահոսքի եռանկյունաձև կտրվածքը ընտըրվել է նրա համար, որ ապահովի ջրի շիթի անցումը մեծ արագությամբ, առանց հատակից կտրվելու:

Նշված կտրվածքը ընդունվել է Լազանաուրի հիդրոէլեկտրակայանի (Վրացական ՍՍՌ) գործող ջրանետի փորձի հիման վրա:

Ճնշումնային ավազանից ջուրը մատուցվում

է տուրբիններին ճնշումնային խողովակաշարի երկու թելի միջով։ Մեկ թելի ընդհանուր երկարությունը՝ 314 մ է, իսկ մյուսինը՝ 318 մ, Սկզբնական տեղամասում խողովակաշարի տրասսան բաց է և անցնում է  $30^{\circ}$  թեքման սարալանջով, հետո խողովակաշարն անցնում է ստորերկրյա տրասսայով սկզբում ուղղաձիգ, այնուհետև հորիզոնական ուղղությամբ մոտենում հիդրոէլեկտրակայանի շենքին։ Խողովակաշարի ստորերկրյա մասն ունի բետոնի մեջ փակված մետաղի պատյան։

Խողովակաշարի տրամագիծը փոխվում է 3,2 մ մինչև 4,2 մ; Խողովակաշարերի ելքի անցքի



Նկ. 4. Ճնշումնային խողովակաշարի գլխամաս

տրամագիծը համապատասխանում է սպիրալային խցիկի մուտքի անցքի տրամագիծին և հավասար է 2,1 մ։

Կայանի շենքի շափերը պլանում կազմում են  $51,5 \times 17,25$  մ (նկ. 5): Շենքի բարձրությունը ստորջրյա մասում հավասար է 21 մ։ Կայանի շենքում տեղավորվում են ագրեգատների բլոկը, մոնտաժման հարթակը, կառավարման վահանը և օժանդակ շինությունները։ Գեներատորային լարման բաշխիչ կառուցվածքը տեղավորված է կցաշենքում ստորին բյեֆի կողմից։ Ագրեգատների բլոկը բաղկացած է տուրբինային հարկից, կիսաշարկից և մեքենաների սրահից։

Տուրբինային հարկում տեղավորված են շա-

ռավուային-առանցքային տուրբիններ՝ գնդային փականակներով, կարգավորիչներով և այլ օժանդակ սարքավորում։

Յուրաքանչյուր տուրբինի ջրի հաշվարկային ծախսը 35 մ<sup>3</sup>/վրկ է, պտույտների թիվը՝ 250 մեկ րոպեում։ 2,1 մ տրամագծով գնդային փականակները տեղադրված են տուրբինների սպիրալային խցիկների առջև։ Տուրբինի լիսեռը զուգակցված է գեներատորային լիսեռի հետ։ Տուրբինային շենքի վերևում տեղավորված է գեներատորային կիսահարկը, որտեղ գտնվում են ուղղաձիգ սինխրոն եռափազ հիդրոգեներատորներ՝ 10,5 կվ լարումով։ Մեքենաների սրահը տեղավորված է գեներատորային կիսահարկի վերևում։ Մեքենաների սրահում տեղադրված են վերին խաչարդները, գեներատորների գրգուչները, ինչպես նաև ագրեգատների ավտոմատիկայի պահանջանները։

Մեքենաների սրահը սպասարկվում է 200/30 տ բեռնունակությամբ կամրջային ամբարձիչով։ Մոնտաժման հրապարակում, որ տեղավորված է կայանի շենքի ձախ ճակատային մասում, բացի հիմնական սարքավորման մոնտաժումից, կատարվում է նաև ուժային տրանսֆորմատորների ստուգումն ու չորացումը։ Կառավարման վահանի բլոկը տեղավորված է կայանի շենքի աջ ճակատային մասում, որտեղ գտնվում է կառավարման վահանի շենքը, ակումուլյատորային մարտկոցը, էլեկտրալաբորատորիան և մյուս ծառայությունների շենքերը։

Կայանի շենքից բանեցված ջուրը հեռացվում է առանձին հեռացնող ջրանցքներով, որոնք միավորվում են մի ընդհանուր ջրանցքի մեջ։ Հեռացնող ջրանցքի ընդհանուր երկարությունը՝ 324 մ է։

Բարձրացնող ենթակայանը բաց տիպի է, տեղավորված է կայանի շենքի և ափի ամրապնդման դամբի միջև։


Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի բաց ենթակայանում նախատեսված է տեղադրել երկու խումբ եռափաթույթ տրանսֆորմատորներ, յուրաքանչյուր խումբը՝ 120 հազ. կվա կարողությամբ։

Կայանում առաջին հերթին կտեղադրվեն մեկ խոռոք արանսֆորմատորներ՝ 220 /110/ 10,5 կվ լարումով:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի կոմուտացիայի գլխավոր սխեման հետևյալն է. գեներատոր-արանսֆորմատոր բլոկը՝ գեներատորացին լարումով, շինաների կրկնակի սիստեմը՝ 110 կվ լարումով. 220 [330] կվ լարման բազմակյուն սխեման իրագործվելու է եռանկյան ձևով, հետագայում մինչև վեցանկյուն ձեր զարգացնելու համար:

Դրվի 330 կվ լարման, Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի ենթակայանում պետք է տեղադրվի 330 կվ լարումով արանսֆորմատորների երկրորդ խոռոքը:

Այսպիսով, Աթարբեկյանի ենթակայանը հանդիսանում է 220 կվ և 110 կվ լարման էլեկտրահաղորդման գծերի հանգույցային կետը: Ենթակայանից գեպի Աղստաֆա, երևան և Քաջարան դուրս են գալիս 220 կվ լարման էլեկտրահաղորդման գծերը, դեպի Սևանի հիդրոէլեկտրակայանը՝ 110 կվ լարման գծերը, դեպի Գյումուշի հիդրոէ-



Նկ. 5. Հիդրոէլեկտրակայանի լայնական հատվածը: Մ 1:500:

ՍՍՌՄ կառավարության որոշմամբ, 1951 թ. Հայկական էներգոսխեմայումը պետք է միացվի Անդրկովկասյան փնջին 220 կվ լարման երևան-Աղստաֆա էլեկտրահաղորդման գծով, իսկ հետագայում այդ գիծը պետք է փոխադրվի 330 կվ լարմանը, Հայկական ՍՍՌ զարգացող արդյունաբերությանը լրացնեցիլ կարողության հաղորդումըն ապահովելու համար: Նշված հաղորդման գիծը կմտնի Աթարբեկյանի ենթակայանը:

Հետագա տարիներին, երբ Աղստաֆայից դուրս եկող էլեկտրահաղորդման գիծը կփոխա-


լեկտրակայանը՝ երկու գիծ և դեպի լեռնահանքային կոմբինատը (Ախտա)՝ երկու գիծ:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի ագրեգատները պետք է ավտոմատացվեն և էներգետիկ վարչության կենտրոնական դիսպեշտչերական կետից կառավարվեն տելեմեխանիկական ձևով:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի նախագիծը մշակել է «Գիդրոէներգոպրոյեկտ» նախագծային ինստիտուտի հայկական բաժանմունքի կողեկտիվը, իսկ նրա շինարարությունը կատարում է Հայհիդրոէներգոշինը:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի կառուցման ընթացքում շինարարների կողեկտիվը մեծ աշխատանք է կատարել՝ սկզբնական շրջանում շինարարական հարթակի նախապատրաստման, իսկ հետագայում հիմնական կառուցվածքների գծով:

Ընթացիկ տարում հատկապես մեծ է հիմ-



Նկ. 6. Պատրաստի թունելի տեղամաս:

նական կառուցվածքների՝ թունելների, ջրանցքների, կայանի շենքի և մյուսների ծավալը:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանի հետ միաժամանակ կառուցվում է նաև Ախտայի շրջ-

կենտրոնից մինչև Սևանի շրջկենտրոնը տանող երկաթփելը՝ 23,8 կմ երկարությամբ, որը հնարավորություն կտա երևանի, Ախտայի և Սևանի միջև հաստատել երկաթուղային կապ: Ենարարական բանվորների համար կառուցվում են բարեկարգ բնակելի տներ (շահագործման է հանձնվել 9400 մ<sup>2</sup> բնակելի տարածություն), կենցաղային սպասարկման տներ, հիվանդանոցներ (50 մահճակալով), պոլիկլինիկայի, յոթնամյա դպրոցի շենքեր և այլն:

Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանում, որը պետք է շահագործման հանձնվի 1959 թ. վերջում, կատարվելու են աշխատանքների հիմնական տեսակների հետևյալ ժավալները:

Հողահանման աշխատանքներ . . . . .	1550 հազ.	մ <sup>3</sup>
Հողալցման աշխատանքներ . . . . .	1180	" "
Բետոնի և երկաթբետոնի աշխատանքներ . . . . .	180	" "
Մետաղի կոնստրուկցիաների և սարքավորման մոնտաժ . . . . .	5110	տ
Ավտոմատարձների կառուցվում . . . . .	30 կմ	
Երկաթգծի կառուցվում . . . . .	23,8	մ

Մի տարուց հետո Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանը, միանալով Հայկական էներգոսիստեմի բարձրավոլտ ցանցին, բարելավելով Սևանա լճից բաց թողնվող ջրի օգտագործումը, լրացուցիչ էլեկտրաէներգիա կտա Հայկական ՍՍՌ աճող արդյունաբերությանը:

## Արտադրության էկոնոմիկա և կազմակերպում

### ՄԻՆՉԵՎ 100 ԿՎ.Տ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՍԻՆԻՐՈՆ ԳԵՆԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԷՖԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ՖՆԻՒԾ-ի սեկտորի պետ

Հին կոնստրուկցիայի մեքենաների փոխարինումը նոր կոնստրուկցիայի մեքենաներով հաղուանում է աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի

իշեցման անհրաժեշտ պայմանը արդյունաբերության այն ճյուղերում, որոնք կիրառում են այդ մեքենաները:

Այդ պատճառով անհրաժեշտ է հիմնավորել